ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մարտի 2022 թվականի N 83-Ա

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Սարալանջի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2022 թվականի մարտի 7-ի N 17 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Սարալանջի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Քրիստինե Մանուկյանին*** 2022 թվականի մարտի 18-ին, մեկ օրով գործուղել քաղաք Երևան, Ազգային ժողովրդավարության ինստիտուտի կողմից իրականացվող «Կատարինե» կանանց քաղաքական առաջնորդության ծրագրի դասընթացին մասնակցելու համար:

2. ***Քրիստինե Մանուկյանի*** գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Սարալանջի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության աշխարհագրության ուսուցիչ ***Լուսինե Դանիելյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2022 թվականի մարտի 10
ք. Հրազդան